

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սոցիալական աշխատանքը որպես մասնագիտություն Հայաստանում մասնագիտությունների ցանկում հայտնվեց 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո: Երկրաշարժը հազարավոր մարդկանց կյանքում առաջացրեց այնպիսի սոցիալական խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր նաև սոցիալական ոլորտի մասնագետների ջանքերի ներդրում: Արևմուտքում վաղուց արդեն նման նպատակներով հաջողությամբ կիրառվում էր «սոցիալական աշխատանք» մասնագիտությունը, որը դասվում է օգնող մասնագիտությունների խմբին, քանի որ նրա հիմնական առաքելությունը սոցիալական հիմնախնդիրներ ունեցող մարդկանց օգնելն է: Ավերիչ երկրաշարժը մի տեսակ կատալիզատորի դեր կատարեց սոցիալական աշխատանքի մասին պատկերացումների տարածման և ներդրման գործում: Օգնության կարիքի սրությունն ու զանգվածայնությունը նպաստեցին նաև, որ մասնագիտական մշակույթի ներդրումն ինչ-որ չափով տարերայնորեն ընթանար. չէր պահպանվում գործողությունների տրամաբանական և ժամանակագրական հաջորդականությունը, անհրաժեշտ չափով հոգ չէր տարվում ներդրվող սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաների հարմարեցման մասին, ժամանակ չափելու նպատակով շատ գործընթացներ զուգահեռ էին իրականացվում, որից տուժում էր դրանց արդյունավետությունը: Ինչևէ, անցած երկու տասնամյակը կարելի է համարել Հայաստանի հասարակությունում «սոցիալական աշխատանք» մասնագիտության ներդրման և նրա ինստիտուտավորման շրջանը: Այդ գործընթացի նախաձեռնողներն ու իրականացնողները ստիպված էին մի քանի ուղղությամբ աշխատել՝ բնակչության հասարակական գիտակցության փոփոխություն, որպեսզի այն ընդուներ նոր մասնագիտության անհրաժեշտությունը, որոշում կայացնողների հետ աշխատանք, սոցիալական աշխատանքի ծառայությունների զարգացում և նրանց համար մասնագետների արագացված պատրաստում, որպեսզի ինչ-որ չափով բավարարվեին բնակչության սոցիալական կարիքները, սոցիալական աշխատանքի գծով մասնագիտական կրթության համակարգի զարգացում և այլն: Գործընթացն իրականացվում էր մեծ դժվարություններով, որովհետև խանգարում էին խորհրդային կարգերից ժառանգություն մնացած կարծրատիպերը, դեռևս ավանդական և ոչ ժողովրդավարական տարրերով լի նախկին մշակույթը, որին հակադրվում էր ժողովրդավարության սկզբունքներ որդեգրած նոր մասնագիտությունը, և, ի վերջո, մարդկանց խորթ էր թվում մասնագիտական «ագրեսիան», որը հատուկ է սոցիալական աշխատանքին: Մի կողմից հասարակությունը բռնել էր շուկայական հարաբե-

րությունների հաստատման ուղին, ինչն ուղղակի հրատապ էր դարձնում սոցիալական պաշտպանության հստակ գործառույթ ունեցող սոցիալական աշխատանքի ներդրումը, մյուս կողմից՝ ամբողջատիրական ավանդույթներով հարուստ մշակութային միջավայրում դժվար էր ակնկալել, որ մարդիկ դժները պատրաստակամորեն կբացեն սոցիալական աշխատողների առջև, ովքեր արևմուտքում հայտնի էին որպես փոփոխության գործակալներ:

Հետխորհրդային Հայաստանում անգործության մատնված սոցիալական պաշտպանության խորհրդային համակարգի տեղում սկսեց կառուցվել նորը: Երկրի անապահով բնակչությանը սոցիալապես աջակցելու պարտականությունը 1993 թվականից դրվեց նորաստեղծ սոցիալական ծառայությունների վրա, որոնք կյանքի կոչեցին «Փարոս» ծրագիրը, որին հետո փոխարինելու եկավ «Աղքատության ընտանեկան նպաստ» համակարգը: Նորաստեղծ այդ ծառայությունները համալրվեցին աշխատողներով, ովքեր տարաբնույթ կրթություն ու մասնագիտություն ունեին: Դեռևս շարունակում էր իշխել այն պատկերացումը, որ սոցիալական ծառայություն մատուցելու համար կարևոր չէ, թե ինչ մասնագիտություն ու կրթություն ունես: Նման մոտեցումը գալիս էր նախորդ հասարակությունից, որի սոցիալական կարիքները հոգացող հազարավոր ծառայողներից ոչ մեկը համապատասխան մասնագիտություն չուներ: Այդ հասարակության մեջ մնան աշխատանքի երաշխավորելիս լավագույն դեպքում հաշվի էր առնվում թեկնածուի գործունեության փորձը որևէ հասարակական կազմակերպությունում: Թեև հետագա տարիներին բազմաթիվ դասընթացներ կազմակերպվեցին նշված ծառայությունների աշխատակիցների համար, բայց այդպես էլ չհաջողվեց նրանց դարձնել սոցիալական հմուտ աշխատողներ. խանգարում էր նաև մասնագիտության անվանումը: Աշխատանք բառը մարդկանց մեջ այն տպավորությունն է ստեղծում, թե իբր խոսքն աշխատանքի որևէ տեսակի մասին է: Իսկ քանի որ սոցիալական բառն էլ առօրյա գիտակցության մեջ նույնացվում է նյութականի հետ, տարերայնորեն ձևավորվում է ոչ ճիշտ պատկերացում սոցիալական աշխատանք մասնագիտության մասին: Հայաստանում այսօր էլ շատերն այն նույնացնում են դրամական նպաստ տրամադրողի գործունեության հետ: Իրականում, երբ ուսումնասիրում ենք մասնագիտության գործառույթների բովանդակությունը, պարզվում է, որ դրամական աջակցությունը բոլորովին էլ մեծ տեղ չի զբաղեցնում դրանցում:

Նախորդ երկու տասնամյակի ընթացքում դժվարությամբ, բայց հաստատականորեն սոցիալական աշխատանքը հիմնավորվում էր Հայաստանի հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքում: Ինչպես ցանկացած սոցիալական ինստիտուտի ստեղծումը, սոցիալական աշխատանքինը նույնպես, թելադրված էր հասարակության համապատասխան պահանջմունքների առաջացմամբ: Այսօր ևս սոցիալական աշխատանքին նվիրված գրավոր աղբյուրներում երբեմն նշվում է, որ սոցիալական աշխատանքը Հայաստանի հասարակության մեջ եղել է շատ վաղուց¹: Իրա-

¹ Տե՛ս **Աշոտ Եսայան**, Սոցիալական ուսմունք, սոցիալական աշխատանք, Եր., 2009, էջ 158:

կանոն մասնագիտության առաջացման ժամանակագրության մասին նման պնդումը ընդունելի չէ: Մասնագիտությունն աշխարհում ընդհանրապես շատ երիտասարդ է, և նրա կենսագրությունը չափվում է մեկ դարից մի փոքր ավելի ժամանակահատվածով²: Իհարկե, սոցիալական աջակցության տարրեր ու նմուշներ կարելի է գտնել մարդկության պատմության ողջ ընթացքում, բայց այստեղ խոսքը մասնագիտական գործունեության մասին է: Հետխորհրդային Հայաստանի հասարակությունն անկախացման առաջին իսկ օրից ժառանգություն ստացավ սոցիալական խնդիրների մի հսկայական բեռ՝ հասարակության փոխակերպման սոցիալական բացասական հետևանքները, որոնց ավելացան երկրաշարժի ու արցախյան երկարատև պատերազմի ծանր հետևանքները: Հասարակությունն արդեն չէր կարող իր ավանդական ինստիտուտների միջոցով՝ ընտանիք, հարևանություն, ընկերներ, լուծել այդ խնդիրները: Դրանք ոչ միայն զանգվածային էին, այլև բարդ, իսկապես մասնագիտական միջամտություն պահանջող: Եթե անգամ սոցիալական պաշտպանության խորհրդային ինստիտուտը վերագործարկվեր, դարձյալ բնակչությունը չէր կարող ակնկալել անհրաժեշտ աջակցություն: Այն չունեի նոր տիպի այնպիսի սոցիալական և սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների լուծման մասնագիտական ներուժ, ինչպես, օրինակ, սահմանափակ կարողություններով մարդկանց սոցիալական և սոցիալ-հոգեբանական վերականգնումը, իրավախախտների ուղղումը և վերահսկողությունը և այլն: Երկրի ողջ բնակչության հասարակական գիտակցության այնպիսի ամբողջական փոփոխություն, որ այն պատրաստ լիներ «սոցիալական աշխատանք» մասնագիտության հետ կապված նորամուծություններն ընկալելու ու յուրացնելու, դժվար էր կարճ ժամանակահատվածում իրականացնել, բայց հատվածային փոփոխություններ այնուամենայնիվ հաջողվեց կատարել մայրաքաղաքում ու աղետի գոտում: Նպաստավոր հանգամանք էր նաև Եվրոպական մշակույթի հետ առնչությունների ինտենսիվացումը: Եվրոպայից սկիզբ առնող և Հայաստանի համար նախատեսված ծրագրերը հաճախ պարունակում էին սոցիալական աշխատանքի բաղադրիչ, ինչը կարևոր լծակ էր սոցիալական աշխատանքի հետ կապված նորամուծությունների ներդրման համար: Ջարմանալի է, բայց իշխանությունների որոշմամբ սոցիալական աշխատողներն առաջինը ամրապնդվեցին հանրապետության քրեակատարողական հիմնարկներում, քանի որ Եվրոպան ուղղակի այդպիսի պայման էր դրել ՀՀ կառավարության առջև: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը այն կառույցն է, որը Հայաստանում սոցիալական աշխատանքի ինստիտուտավորման գործընթացի հիմնական պատասխանատուն է: Ինստիտուտավորումը սկսվեց ընտանեկան նպաստների համակարգից և աստիճանաբար տարածվեց ու խորացավ երեխաների պաշտպանության համակարգում՝ մանկատներում, խնամքի կենտրոններում, կրթական հաստատություններում, համայնքապետարաններում, որտեղ աստիճանաբար ձևավորվեցին ու զարգացան սոցիալական ծառայություններ, որոնցում պարտադիր ներկայացված է սոցիալական աշխա-

² Տե՛ս **Теодор Шанин**. Социальная работа как культурный феномен современности. <http://www.russ.ru/journal...old.russ.ru/journal/inie/97-09-26/shanin.htm>

տողը: Պետք է ընդունել, որ այդ գործում պետությունը ստանում էր հասարակական հատվածի շատ լուրջ աջակցությունն ի դեմս միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների: Անցած երկու տասնամյակում սոցիալական աշխատանքի բաղադրիչով հարյուրավոր սոցիալական ծրագրեր իրականացվեցին նրանց կողմից, որոնց շնորհիվ աճեց մասնագիտության մասին բնակչության իրազեկվածությունը, մշակվեցին ու փորձարկվեցին բազմաթիվ սոցիալական տեխնոլոգիաներ, որոնք հետո պետության կողմից ներդրվեցին կյանք, ձևավորվեց ու զարգացավ սոցիալական նոր մշակույթ: Այդ ողջ ընթացքում սոցիալական աշխատանքն ինստիտուտավորվում էր նաև կրթության ոլորտում. հանրապետությունում ձևավորվեց ու կայացավ սոցիալական աշխատանքի գծով մասնագիտական կրթությունն ապահովող համալսարանական համակարգը: Սոցիալական աշխատանքի ինստիտուտի գործառնման շրջանակի հետագա ընդլայնումը կհանգեցնի դպրոցական կրթության, առողջապահության, արդարադատության, ռազմական պաշտպանության և այլ ոլորտներում «սոցիալական աշխատանք» մասնագիտության զանգվածային ներդրմանը:

Սոցիալական աշխատանքի ինստիտուտի հայտնվելը հետխորհրդային Հայաստանի հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքում բարենպաստ ազդեցություն ունեցավ այդ կառուցվածքի փոխակերպման ողջ ընթացքում: Կա տեսակետ, որ սոցիալական աշխատանքն ինքնուրույն ինստիտուտ չէ, այլ միայն լրացնում է առկա սոցիալական ինստիտուտներին՝ չեզոքացնելով նրանց վրիպումները և ինստիտուցիոնալ դիսֆունկցիաները: Դրանում որոշակի ճշմարտություն կա: Ընտանիքի, կրթության, առողջապահության և իրավունքի ինստիտուտների գործառնման ընթացքում բազմաթիվ դեպքեր են նկատվում, երբ այդ ինստիտուտների մեջ ներառված մարդկանց կյանքում ծագում են սոցիալական խնդիրներ: Օրինակ՝ այսօր առողջապահության և կրթության ինստիտուտների կողմից վճարովի ծառայություններ մատուցելու պատճառով շատ ծառայություններ բնակչության սոցիալապես խոցելի խմբերի համար դառնում են դժվարամատչելի կամ անմատչելի: Եվ սոցիալական աշխատողներն իրենց միջամտությամբ փորձում են հնարավորինս մեծացնել նման ծառայությունների մատչելիությունն իրենց այցելուների համար: Նրանք ուղղակի դառնում են կրթական, առողջապահական և այլ հաստատությունների անձնակազմի մաս, որպեսզի շատ օպերատիվ արձագանքեն համապատասխան դեպքերին: Սակայն, նման լրացական գործառնումներ իրականացնելուց բացի, սոցիալական աշխատանքի ինստիտուտն իրականացնում է նաև միայն իրեն հատուկ գործառնումներ: Օրինակ՝ այն այսօր ակտիվորեն մասնակցում է թրաֆիքինգի զոհերի վերկանգնողական աշխատանքներին, ներառական կրթության և անխնամ մնացած երեխաների խնամքի կազմակերպման աշխատանքներին և այլն: Անկախացումից հետո Հայաստանում սկսված ինստիտուցիոնալ փոխակերպումների ընթացքում սոցիալական աշխատանքը սկսեց յուրատեսակ մեղմիչի դեր կատարել: Գործող սոցիալական ինստիտուտները, ձգտելով հարմարվել հասարակության որդեգրած նոր սկզբունքներին, սոցիալական խնդիրներ էին

ստեղծում մարդկանց համար: Սոցիալական աշխատանքի ինստիտուտը ստանձնում է այդ հիմնախնդիրների լուծումը, որի շնորհիվ հասարակության մեջ սոցիալական լարվածությունը չի սրվում, մարդկանց իրավունքները դառնում են հնարավորինս պաշտպանված, իսկ ինստիտուցիոնալ մշակույթը՝ ավելի ժողովրդավարական:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Հայաստանում սոցիալական աշխատանքի ինստիտուտավորումն ընդհանուր գծերով կատարված է. մասնագիտության նկատմամբ կարիքը առկա է, գիտակցված է դրա բավարարման անհրաժեշտությունը, ստեղծված են կարիքի բավարարման ձևայնացված մեխանիզմներ, ինչպես նաև լուծված է մասնագիտական աշխատուժի արտադրության և վերարտադրության խնդիրը: Չնայած այս բոլորին՝ գործունեության ինստիտուտավորման առումով դեռ շատ խնդիրներ կան լուծելու: Այսօր Հայաստանում սոցիալական աշխատողները պայքարում են իրենց մասնագիտության կարգավիճակի ճշգրտման, մասնագիտական գործառույթների հստակեցման համար: Քանի որ անցած տարիներին պետական և հասարակական հատվածներից տարբեր կառույցներ են մասնակցել այս մասնագիտության ներդրմանը Հայաստանում, ինչպես նաև տարբեր երկրների մշակութային ազդեցությունը մեծ դեր է խաղացել, այսօր պրակտիկ դաշտում ստեղծվել է շատ խայտաբղետ պատկեր: Նախ՝ կողք կողքի սոցիալական աշխատողի դերակատարմամբ հանդես են գալիս համալսարանական մասնագիտական կրթությամբ կարիքերը և տարբեր տևողությամբ ու բովանդակությամբ վերապատրաստումներ անցած մարդիկ: Նրանք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում նույնիսկ միևնույն տիպի և միևնույն խնդիրներն ունեցող շահառուների հետ տարվող աշխատանքում, բնականաբար, կիրառում են տարբեր մեթոդներ, մոդելներ, ընթացակարգեր և աշխատանքային գործիքներ: Մայրենի լեզվով սահմանված ու հստակեցված չեն ամենօրյա պրակտիկային առնչվող մասնագիտական հիմնական հասկացությունները, մշակված ու ընդունված չեն մասնագետների գործունեությունը կարգավորող էթիկական նորմերը, շատ թույլ է մասնագիտական վերահսկողությունը: Սոցիալական աշխատանքը, հակառակ թվացյալ հեշտությանը, իրականում շատ բարդ մասնագիտություն է, և պատշաճ հմտություն չունենալու դեպքում հեշտությամբ կարելի է վնասել մարդկանց: Այսպիսով, այսօր մասնագիտական գործունեության ոլորտում լրջագույնս ծառայած է ստանդարտացման խնդիրը:

Թերևս պետք է սկսել մասնագիտության սահմանման շուրջ համաձայնության կայացումից, քանզի մասնագիտական գրականության մեջ շրջանառվում են սոցիալական աշխատանքի տարբեր սահմանումներ, որոնց համաձայն այն ներկայացվում է որպես գիտություն, կիրառական գիտություն, օգնող մասնագիտություն, արվեստ և այլն:

Օրինակ, «Վիքիպեդիան» այն սահմանում է որպես «մասնագիտական գործունեություն, որն ուղղված է կենսական դժվարություններ ունեցող մարդկանց և խմբերին օգնելուն, նրանց հոգեբանական վերականգնմանը և ներառմանը»³: Մեկ այլ դեպքում սոցիալական աշխատանքը բնութագրվում

³ [http://en.wikipedia.org/wiki/Social Work](http://en.wikipedia.org/wiki/Social_Work)

է որպէս կիրառական գիտութիւն, որի նպատակը շահառուների շրջանում ծագած սոցիալական հիմնախնդիրների բացահայտումն ու հաղթահարումն է⁴:

Մասնագիտության ձևավորման ակունքների մոտ կանգնած Մերի Ռիչմոնդը սոցիալական աշխատանքը սահմանելիս նկատի է ունենում այն գործընթացները, որոնք զարգացնում են անձին և մեծացնում նրա հարմարվողականությունն իր միջավայրին⁵: Ստրոուփն իր սահմանման մեջ կարևորում է սոցիալական աշխատողի կողմից շահառուի կարիքները բավարարելիս տարբեր գիտական մեթոդներ կիրառելու ունակությունը⁶: Սոցիալական աշխատողի օգնությունը սովորական օգնությունից ու աջակցությունից հիմնականում տարբերվում է նրանով, որ այս դեպքում օգնություն ստացողն ակտիվորեն մասնակցում է իրեն օգնելու գործընթացին և, օգնություն ստանալու հետ մեկտեղ, զինվում է համապատասխան դեպքերում իր խնդիրներից ինքնուրույն գլուխ հանելու համար անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով: Մասնագիտության տարածման առաջին փուլում Հայաստանում հաճախ կարելի էր հանդիպել դեպքերի, երբ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների բացակայության պատճառով մասնագետների միջամտությունները սոցիալական խնդիրներ ունեցող մարդկանց կյանքին նրանց մեջ ձևավորում ու խորացնում էին կախվածություն ծառայություններից: Մինչդեռ իրականում սոցիալական աշխատանքը մարդկանց ուժեղացնող մասնագիտություն է: Ըստ այդմ, սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի կողմից ընդունված էթիկայի վարքականոնում տրված սահմանման մեջ շեշտվում է ցանկալի փոփոխություններին նպաստելը, մարդկանց ուժեղացումը, որպեսզի նրանք ավելի բարեկեցիկ ապրեն, և այդ ամենի հիմքում դրվում է մարդու իրավունքները և սոցիալական արդարությունը պաշտպանելու գաղափարը⁷: Ընդհանուր առմամբ սոցիալական աշխատանքի սահմանումներում սոցիալական աշխատանքի դերը դիտարկվում է երեք տարբեր տեսանկյուններից՝ 1. որպես ճնշող կապիտալիստական համակարգի մաս, որը պետք է վերահսկի սոցիալապես խոցելի բնակչության կյանքը և նրանց համար աշխատելու հնարավորություններ ստեղծի, 2. որպես սոցիալական փոփոխության պաշտպան, որը զարգացնում է աջակցող միջավայրը և խթանում կոլեկտիվ գործողությունները, 3. այս երկուսը միասին՝ որպես կապիտալիստական հասարակության գործակալ և փոփոխության գործակալ⁸:

Հասարակությունը սոցիալական համակարգ է, որի գործառույնը կարող է դժվարանալ ոչ միայն համակարգային խնդիրների պատճառով, այլև նրա ենթահամակարգերում ծագած դժվարությունների հետևանքով: Եթե անհատներն ու խմբերը, որպես «հասարակություն» համակարգի տարր, սոցիալական խնդիրներ են ունենում, ապա նրանց սոցիալական

⁴ Տե՛ս **Сергей Турчин**. Социальная работа. <http://www.topwork.com.ua/front/article/doc/236,14.03.2011>

⁵ Տե՛ս **Mary Richmond**, What is Social Case Work? New York, 1922, էջ.98:

⁶ Տե՛ս **Herbert H. Stroup**, Social Work, New York, 1960, էջ 1-2:

⁷ Տե՛ս <http://www.ifsw.org/f.38000032.html>.

⁸ Տե՛ս «The Blackwell Encyclopedia of Sociology», Edited by G. Ritzer, vol. 9, Singapor, 2009, էջ 4544:

գործառուճը դառնում է խնդրահարույց, և վտանգվում է համակարգի հավասարակշռությունը: Օրինակ, եթե որևէ ընտանիքում ծնողները, չունենալով ծնողավարման անհրաժեշտ հմտություններ, ֆիզիկական բռնություն են կիրառում երեխաների նկատմամբ իրենց զանցանքների համար պատժելիս, ապա, ի դեմս երեխաների, նախադրյալ է ստեղծվում հասարակության մեջ դաստիարակության նման մեթոդի տարածման և խորացման համար: Ոչ միայն այդ երեխաների իրավունքն է ոտնահարվում, այլև ուրիշների, որովհետև նրանց երեխաները դառնալով չափահաս, հետագայում համանման վերաբերմունք են դրսևորում այլոց նկատմամբ: Նման դեպքում սոցիալական աշխատողի արհեստավարժ միջամտությունը հանգեցնում է ծնողների հմտացմանը, և տվյալ ընտանիքն սկսում է արդարացնել իր հանդեպ հասարակության ունեցած սպասումները: Մարդկանց սոցիալական գործառուճը կարող է դժվարանալ տարբեր պատճառներով՝ հիվանդություն և հաշմանդանություն, միջավայրի ստեղծած անհարմարություններ, անձի կոնֆլիկտային և ոչ հարմարվողական վարքագիծ, անհրաժեշտ օրենքների բացակայություն և խտրական վերաբերմունք, կյանքում առաջացած ճգնաժամեր, բնական ու սոցիալական աղետներ և այլն: Բոլոր նման դեպքերում մարդիկ չեն կարողանում լիարժեք կատարել իրենց սոցիալական դերերը, որի հետևանքով վտանգվում է նրանց բնականոն կյանքը: Սոցիալական աշխատողը միջամտում է բոլոր այն դեպքերում, երբ մարդիկ ինքնուրույն չեն կարողանում գլուխ հանել իրենց առջև ծառայած սոցիալական խնդիրներից: Սակայն սոցիալական աշխատողները չեն սպասում, որ դժվարությունները ծագեն և նոր միայն իրենք միջամտեն: Նրանք առաջ են նայում և կարող են կանխատեսել ռիսկերը: Հետևաբար, նրանց միջամտությունը կարող է լինել նաև կանխարգելիչ: Օրինակ, երբ նրանք պայքարում են բոլոր երեխաների իրավունքների պաշտպանության համար, դրանով իսկ փորձում են կանխել ապագա ռիսկերը նրանց կյանքում: Ավելին, սոցիալական աշխատողները պայքարում են բոլորովին նոր սոցիալական հարաբերությունների կառուցման համար: Օրինակ, նախադպրոցական և դպրոցական հաստատություններում կազմակերպելով գենդերային կրթություն ու դաստիարակություն, նրանք նպաստում են գենդերային առումով իրավահավասար հասարակության ստեղծմանը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սոցիալական աշխատանքը գիտական հիմքերի վրա իրականացվող, ինքնուրույն մասնագիտական գործունեություն է, որը ենթադրում է մասնագետի միջամտությունը բոլոր այն դեպքերում, երբ մարդկանց կյանքը դժվարանում է սոցիալական խնդիրների պատճառով: Սոցիալական աշխատողների թիրախը բոլոր այն անհատներն ու խմբերն են, որոնց հիմնական պահանջմունքների բավարարումը դարձել է կամ կարող է դառնալ ռիսկային: Հասարակության մեջ նրանք իրականացնում են սոցիալական թերապևտի գործառույթ: Իզուր չէ, որ նրանում մինչև 20-րդ դարի յոթանասունականների վերջն ընդունված է եղել բժշկական մոտեցումը, քանզի կարծվում էր, որ սոցիալական աշխատողները կատարում են սոցիալական ախտորոշում ու սկսում բուժել իրենց շահառուներին: Օրգանիցիզմի հետևորդների պնդումների հա-

մատչելիությունը մնալով մոտեցումը շատ արդարացի կլինեն: Սոցիալական աշխատողների թերապևտիկ միջամտությունը նպաստում է մարդ-միջավայր կապի բարելավմանը, որպեսզի մարդիկ սոցիալական հարաբերությունների ցանցում ավելի ինտեգրված ու հարմարված լինեն: Նրանք յուրօրինակ ճարտարագետներ ու ճարտարապետներ են՝ իրենք կարող են նախագծել ցանկալի սոցիալական իրականությունը և կառուցել այն:

Երբեմն մարդիկ սոցիալական աշխատանքը շփոթում են սոցիոլոգիայի հետ: Իրականում դրանց միջև հսկայական տարբերություն կա: Եթե երկրորդն անվիճելիորեն գիտություն է, ապա առաջինը նաև այդ գիտության նվաճումներն օգտագործող շատ գործնական մասնագիտություն է:

Ընդհանուր առմամբ սոցիալական աշխատանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ հասարակական հարաբերությունների բարելավման տեխնոլոգիա: Եթե սոցիոլոգները ուսումնասիրում են հասարակությունը և հայտնաբերում նրա զարգացման օրինաչափություններն ու գոյություն ունեցող շեղումները, ապա սոցիալական աշխատողները փորձում են շտկել առկա շեղումները և կանխել նորերի առաջացումը: Բոլոր գիտություններն ունեն իրենց ուսումնասիրության հատուկ օբյեկտն ու առարկան, իսկ գիտական գործունեության վերջնական նպատակը նորանոր փաստերի հայտնաբերումն է: Գիտնականի գիտական հետաքրքրասիրությունը երբևէ չի սպառվում որևէ ուսումնասիրությունից հետո: Այս տեսանկյունից ցանկացած գիտության հիմնական գործառույթը գիտնական է, այսինքն՝ օբյեկտի մասին նոր գիտելիքներ ստանալը: Չնայած գիտական ուսումնասիրություն կատարելու փուլում կարող է թվալ, որ հետազոտական հիմնախնդրի ընտրությունը և լուծումը պայմանավորված է հետազոտողի նախասիրությամբ, այնուամենայնիվ նա առաջնորդվում է հասարակության պահանջով: Գիտական ցանկացած արտադրանքի վերջնական սպառողը հասարակությունն է: Պարզապես, եթե կիրառական գիտությունների դեպքում պատվիրատուն ակնհայտ ու տեսանելի է, ապա տեսական գիտությունների դեպքում նա չի նկատվում: Սակայն երկու դեպքում էլ գիտական գործունեությունը չի ենթադրում գիտական գիտելիքների կիրառում պրակտիկայում: Որևէ գիտնական չի անհանգստանում այն բանի համար, թե մնացած մարդիկ ինչպես են օգտագործելու իր հետազոտության արդյունքները: Նույնիսկ այն դեպքում, երբ հայտնագործությունը կատարվում է պատվերով, գիտնականն ինքը չի ներդնում իր հայտնագործությունը կյանք: Գիտության պատմությունը վկայում է, թե ինչպես միևնույն հայտնագործություններն օգտագործվել են թե՛ բարի, թե՛ չար նպատակներով, և դրանում գիտնականները մեղավոր չեն եղել: Վերադառնալով սոցիալական աշխատանքին, իհարկե, կարելի է պնդել, որ սոցիալական աշխատողը ևս ուսումնասիրում է մարդկանց կյանքը, որպեսզի հասկանա, թե որն է դժվարությունը կամ որտեղ և ինչու կարող են առաջանալ սոցիալական ռիսկեր, բայց նրա ուսումնասիրության նպատակը կոնկրետ մարդկանց կյանքը բարելավելն է:

Իհարկե, կարելի է համաձայնել, որ կարող է լինել սոցիալական աշխատանքի գիտություն, բայց այդ դեպքում նաև պետք է ընդունել, որ նրա օբյեկտը և առարկան կլինեն ոչ թե սոցիալական խնդիրներ ունեցող մար-

դիկ, այլ այդպիսի խնդիրներ ունեցող մարդկանց հետ տարվող սոցիալական աշխատանքը: Աշխատանքի բաժանման ընթացքը կարող է հանգեցնել այն բանին, որ ժամանակի ընթացքում կձևավորվի մասնագետների մի այնպիսի խումբ, որը կզբաղվի սոցիալական աշխատողների պրակտիկ գործունեության ուսումնասիրմամբ, որպեսզի նրանց համար մշակի նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ: Երբեմն դրությունը փրկելու համար սոցիալական աշխատողները փորձում են իրենց բաժանել երկու խմբի՝ պրակտիկների ու տեսաբանների, և ըստ այդմ պնդել, որ երկրորդները գիտությամբ են զբաղվում: Դա խնդրի միայն ժամանակավոր լուծում է: Հարկավոր է գտնել սոցիալական աշխատանքի գիտությունը բնորոշող հասկացություն, որով կհստակեցվի գործունեության երկու տեսակների միջև առկա սահմանը: Իսկ մինչ այդ, որքան էլ գայթակղիչ լինի գիտնականի կարգավիճակը, կոնկրետ մարդկանց հետ աշխատող և նրանց կյանքի բարելավմամբ զբաղվող սոցիալական աշխատողները չեն կարող իրենց համարել զուտ գիտությամբ զբաղվող մասնագետներ: Նույնը վերաբերում է նաև համանման մյուս բոլոր մասնագետներին՝ բժիշկներ, մանկավարժներ, իրավաբաններ և այլն: Անզլալեզու գրականության մեջ նրանց բոլորին միավորում է «օգնող մասնագիտություն» անվանումը, այնպես որ պետք է ընդունենք, որ Հայաստանում սոցիալական աշխատանքն առայժմ գտնվում է «օգնող մասնագիտության» կարգավիճակում:

АРТАК ХАЧАТРЯН – Становление института социальной работы в Армении. – Специальность “социальная работа” – приобретение постсоветского армянского общества. Основные идеи, затрагивающие эту профессиональную сферу, были позаимствованы сразу после Спитакского землетрясения 1988 года, которое породило в нашей стране широкий спектр социальных проблем. Те, кто первыми занялись их решением, осваивали навыки и культуру социальной работы. В статье рассмотрены вопросы, связанные со статусом социальной работы в обществе, и сделан вывод о её постепенной институционализации в современной Армении.

ARTAK KHACHATRYAN – The Institutionalization of Social Work in Armenia. – The specialty “Social Work” is the acquisition of post-Soviet Armenian Society. The main ideas about the profession were imported into Armenia just after the earthquake in Spitak, after which the Society appeared under the oppression of wide range of social problems. First social workers started to solve these problems promoting the implementation of the professional culture in Armenia. Step by step their efforts led to the institutionalization of Social Work in Armenian Society. In the article the author also discusses problems relating to the status of profession in the Society. Bringing different arguments the author concludes that in general Social Work is institutionalized in modern Armenia.